ԿԱՐԵՆ ՓԱՎԼԵՄԱՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԳԵՆԵՐԱԼ-ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՄԻԽԱՅԻԼ ԷԲԵԼՈՎ (1855-1919)

ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին ցարական Ռուսաստանի զինված ուժերում մեծ հեղինակություն էր վայելում հայազգի գեներալ եւ փաղանդավոր ռազմագետ Միխայիլ Իսայի Էբելովը[1]: Նրա կյանքի պատմությունն ու ծառայողական ուղին, սակայն, մի շարք պատճառներով պայմանավորված՝ մինչեւ օրս ըստ արժանավույն չեն լուսաբանվել: Այդ պատճառների թվում էր ինչպես ազգային պատկանելությունը, այնպես եւ 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Խորհրդային Միության ամբողջ տարածքում հին բանակի սպաների նկատմամբ իրականացվող հատուկ միջոցառումները: Այդ միջոցառումներով հիմնականում վերջ տրվեց նախկին սպայության գոյությանը, կազմակերպված ձեւով ոչնչացվեց նրանց հիշատակը: Այսինքն՝ ամեն ինչ արվեց որպեսզի մոռացության մատնվի խորհրդային կարգերի կողմը չանցած զինվորականության պատմությունը: Եւ եթե չէին հիշատակվում ազգությամբ ռուս արժանավորները, ապա ոչ ռուսներին անդրադառնալն անգամ ավելորդ էր:

Գեներալ Էբելովը այն ռազմական գործիչներից էր, որոնք ունեին հարուստ ռազմական փորձ ու բարձր հրամանատարական հատկանիշներ, որոնք ստիպել են, որ կայսրության բարձրագույն շրջանակները հայազգի գեներալին վստահեին պատասխանատու պաշտոններ: ԺԹ. դարի վերջի եւ հաջորդ դարի սկզբի քաղաքական զարգացումներն ուղղակի պարտավորեցրել են ցարին եւ զինվորական բարձրաստիճան ղեկավարությանը մի կողմ դնել Էբելովի ազգային պատկանելության գործոնը[2] եւ հաշվի նստել նրա որակական հատկանիշների, փորձի հետ: Մ. Ի. Էբելովի

1 Էբելով ազգանունը հայկական Աբելով ազգանվան փոփոխակն է: Տե՛ս **Ю. Асадов,** *1000 офицерских имен в Армянской истории. Историко-биографические очерки,* Пятигорск, 2004, էջ 135:

2 Սկսած այն ժամանակներից, երբ ոչ ռուս ազգությունները մասնակից դարձվեցին համընդհանուր զորակոչին, Գերագույն շտաբի հատուկ գաղտնի ցուցումի համաձայն՝ ցարական բանակում ոչ ռուս զինվորների (բացի ուկրաինացիներից եւ բելոռուսներից) թվաքանակը չպետք է գերազանցեր խաղաղ ժամանակներում՝

ավանդը Ռուսաստանի ռազմական պատմության մեջ ծանրակշիռ է եւ մեր օրերում եւս ունի դաստիարակչական մեծ նշանակություն:

Միխայիլ Իսայի Էբելովը ծնվել է 1855 թ. սեպտեմբերի 12-ին, Պոդոլսկի նահանգում, բարձրաստիճան զինվորականի ընտանիքում: Ցարական Ռուսաստանի զինված ուժերում Էբելովը ծառայության է անցել 1873 թ. օգոստոսի 14-ին: Կրթություն է ստացել Արակչաեւի անվան Նիժեգորոդյան գիմնազիայում, 3-րդ Ալեքսանդրյան ռազմական ուսումնարանում, որը 1875 թ. ավարտելով պրապորշչիկի զինվորական կոչումով՝ ծառայության է նշանակվել ռուսական 10-րդ հրետանային բրիգադում: Ծառայության ընթացքում 1876 թ. դեկտեմբերի 9-ին ստացել է պոդպորուչիկի, 1878 թ. դեկտեմբերի 18-ին՝ պորուչիկի, 1882 թ. նոյեմբերի 29-ին՝ շտաբս-կապիտանի զինվորական կոչումներ: Այդ տարիներին օրինակելի եւ անբասիր ծառայության համար 1881 թ. արժանացել է Ս. Ստանիսլավի 3-րդ աստիճանի շքանշանի: Այնուհետեւ Էբելովն ընդունվել է Գլխավոր շտաբի Նիկոլաեւյան ակադեմիան, որը 1885 թ. ավարտել է առաջին աստիճանով: 1885 թ. մարտի 29-ին նա ստացել է կապիտանի կոչում եւ հունիսի 1-ից մինչեւ հոկտեմբերի 18-ը որպես ավագ հանձնակատար ծառայել է ռուսական 17-րդ հետեւակային դիվիզիայի շտաբում: Նույն թվականի հոկտեմբերի 19-ից մինչեւ 1886 թ. նոյեմբերի 10-ը եղել է ռուսական 8-րդ հետեւակային դիվիզիայի շտաբի ավագ հանձնակատար, իսկ 1886 թ. նոյեմբերի 10-ից մինչեւ 1887 թ. հոկտեմբերի 3-ը՝ ռուսական 6-րդ բանակային կորպուսի շտաբի ավագ հանձնակատար: 1886 թ. դեկտեմբերի 1-ից մինչեւ 1887 թ. դեկտեմբերի 1-ը որպես վաշտի հրամանատար ծառայել է ռուսական Տոբոլսկյան 38-րդ հետեւակային գնդում: 1887 թ. հոկտեմբերի 3-ից մինչեւ 1890 թ. դեկտեմբերի 5-ը եղել է Բրեստ-Լիտովսկյան ամրոցային շտաբի շարային մասի ղեկավար՝ 1888 թ. ապրիլի 24-ին ստանալով փոխգնդապետի կոչում եւ 1889 թ. արժանանալով Ս. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանի[3]: 1890 թ. դեկտեմբերի 5-ից մինչեւ 1892 թ. օգոստոսի 26-ը նա Վարշավայի զինվորական օկրուգի զինվորական հաղորդակցությունները համակարգող պաշտոնյան էր, ղեկավարել է Վարշավայի տարածքում գտնվող ռուսական զորքի տեղաշարժը երկաթուղով՝ 1892 թ. ապրիլի 5-ին ստանալով գնդապետի զինվորական կոչում: 1892 թ. օգոստոսի 26-ից 1900 թ. հուլիսի 15-ը եղել է Վարշավյան զինվորական օկրուգի ռազմական հաղորդակցությունների ղեկավարը: Օրինակելի պաշտոնավարության համար Էբելովը 1895 թ. արժանացել է Ս. Ստանիսլավի 2-րդ աստիճանի շքանշանի: 1900 թ. հուլիսի 15-ից 1901 թ. հունիսի 18-ը Էբելովը Մերձամուրյան զինվորական օկրուգի ռազմական հաղորդակցությունների ղեկավարն էր եւ 1900 թ. հուլիսի 31-ին

անձնակազմի 1/5դդ, իսկ պատերազմական ժամանակաշրջանում՝ 1/3դդ մասը: Տե՛ս **Ա. Հարությունյան**, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաղիվանագիտական պատմությունից (1914-1918), Երեւան, 1983, էջ 86: **П. А. Голуб**, *Большевики и армия в трех революциях, Москва, 1977, із 21. Д. Гаркавенко, Партия, армия и флот в февральской революции,* Ленинград, 1972, էջ 50:

3 Տե՛ս *"Списокъ Генераламъ по старшинству", С.-Петербургъ*, 1904, էջ 860:

գերազանց ծառայության համար որպես պարգև ստացել է գեներալ մայորի կոչում[4]: Նոր պաշտոնում Էբելովը դարձյալ առանձնացել է իր տքնաջան եւ արդյունավետ ծառայությամբ: Մասնավորապես նրան է պատկանում երկաթուղով զորքի եւ զենք-զինամթերքի տեղափոխման նոր մեթոդի մշակումն ու կիրառումը: Այդ մեթոդը լայնորեն կիրառվել է 1900-1901 թթ. ընթացքում՝ «իխետուանների» ապստամբությունը ճնշելու նպատակով դեպի Չինաստան կազմակերպված ռազմարշավի ժամանակ[5]: Երբ սկսվել է «իխետուանների» ապստամբությունը, ցարական հրամանատարությունը Էբելովին ծառայության է նշանակել Մերձամուրյան զինվորական շրջանում՝ նրան վստահելով օկրուգի ռազմական հաղորդակցությունների ղեկավարի պաշտոնը[6]:

1901 թ. հունիսի 18-ից 1902 թ. նոյեմբերի 7-ը հայազգի գեներալը եղել է Կովկասյան զինվորական շրջանի ռազմական հաղորդակցությունների ղեկավար[7]: Դարձյալ օրինակելի ծառայության համար 1901 թ. Էբելովն արժանացել է Ս. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանի[8]: 1902 թ. նոյեմբերի 7-ից 1906 թ. հոկտեմբերի 25-ը ռուսական 20-րդ բանակային կորպուսի շտաբի պետն էր: Այդ պաշտոնում եւս օրինակելի ծառայության համար 1903 թ. նա արժանացել է պարսկական առյուծի եւ արեւի 1-ին աստիճանի շքանշանի, իսկ 1904 թ. արժանացել է Ս. Ստանիսլավի 1-ին աստիճանի շքանշանի[9]: 1906 թ. հոկտեմբերի 25-ից մինչեւ 1909 թ. մարտի 20-ը եղել է Անդրբայկալյան շրջանի զորքերի հրամանատար եւ Անդրբայկալյան կոզակական զորքերի ատամանը՝ 1907 թ. ապրիլի 22-ին դարձյալ գերազանց ծառայության համար ստանալով գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում[10]: 1908 թ. ապրիլի 26-ից մինչեւ 1909 թ. մարտի 20-ը Էբելովը համատեղել է նաեւ Անդրբայկալյան շրջանի նահանգապետի պաշտոնը: Նահանգապետի պաշտոնում Էբելովի

4 Տես *"Списокъ Генераламъ по старшинству", С.-Петербургъ*, 1900, էջ 1005:

5 ԺԹ. դարի վերջին Չինաստանում ձեւավորվող հակառուսական տրամադրությունները շուտով վեր աճեցին մի ապստամբության, որը պատմության մեջ հայտնի է «իխետուանների» ապստամբություն անվանումով: Չինաստանում օրեցօր ահագնացող այս շարժումը հնազանդեցնելու համար ցարական Ռուսաստանը 1900թ. ռազմարշավ է կազմակերպում դեպի Մանջուրիա եւ իրականացնում է պատժիչ գործողություններ: Տես **Б. А. Романов**, *Очерки дипломатической истории русско-японской войны 1895-1907,* Москва-Ленинград, 1955, էջ 122:

6 ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին Ռուսաստանի երկաթուղին, որպես ստրատեգիական նշանակության ոլորտ, գտնվել է զինվորական գերատեսչության ենթակայության ներքո: Ցարական Ռուսաստանի գրեթե բոլոր զինվորական շրջաններում առկա էին երկաթուղու ոլորտը կարգավորող հատուկ պաշտոնյաներ: Վերջիններս նաեւ զինվորական շրջանների զինվորական հաղորդակցությունների նախագահներն էին: Այս հանգամանքով պայմանավորված՝ Ռուսաստանի բարձրագույն եւ մասնագիտական ուսումնական հաստատություններում, որպես շատ պահանջվող եւ էլիտար մասնագիտություն, պատրաստվում էին նաեւ հաղորդակցության մասնագետներ: Գլխավոր շտաբի Նիկոլաեւյան ակադեմիայի շրջանավարտների եւ հաղորդակցության ինստիտուտի շրջանավարտների կրծքանշանները նույնական էին:

7 Տես *"Списокъ Генераламъ по старшинству", С.-Петербургъ,* 1904, էջ 860:

8 Սկսած 1845 թ. Ս. Վլադիմիրի ցանկացած աստիճանի շքանշանով պարգեւատրվող անձը միաժամանակ ստանում էր տոհմային ազնվականի իրավունք: Հետագայում որոշակի սահմանափակում մտցվեց ազնվականության իրավունքի առումով եւ 1900 թ. մայիսի 28-ի օրենքի համաձայն՝ Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով պարգեւատրվողը ստանում էր միայն անձնական ազնվականության իրավունք:

9 Տես *"Списокъ Генераламъ по старшинству", С.-Петербургъ,*1907, էջ 309:

10 Տես *"Списокъ Генераламъ по старшинству", С.-Петербургъ*, 1912, էջ 194:

գերազանց ծառայությունը դարձյալ արժանացել է Նիկոլայ II-ի եւ զինվորական բարձրագույն ղեկավարության ուշադրությանը: Հայազգի գեներալի շնորհիվ կարճ ժամանակահատվածում զորաշրջանում էականորեն նվազել է հանցագործությունների թիվը: Ճիշտ է, Էբելովը շատ հաճախ դիմել է նաեւ կտրուկ միջոցների (օրինակ, երբ 1906 թ. հոկտեմբերին Չիտայի բանտի բակում հրապարակային մահապատժի ենթարկվեցին մի շարք հանցագործ-մարդասպաններ), բայցեւ հենց այդ միջոցներից հետո էր, որ քաղաքում հանցագործները միանգամից անցան ընդհատակ կամ ընդհանրապես լքեցին զորաշրջանի տարածքը: Այդ ժամանակ հանցագործություն էր դիտվում նաեւ ցանկացած հակակառավարական դրսեւորում, ինչով պայմանավորված տարածաշրջանի գործադուլավոր երկաթուղայինների հիմնական մասը միանգամից վերադարձավ իր բնականոն աշխատանքային ռեժիմին: Էբելովի կառավարման տարիներին տեղի են ունեցել ավելի քան 20 գործադուլներ: Միայն 1908 թ. ընթացքում նրա անմիջական հանձնարարությամբ Չիտայում ձերբակալվել է 63 մարդ: Մեծ ջանքերի շնորհիվ Միխայիլ Էբելովին եւ նրա վարչախմբին ռուսական առաջին հեղափոխությունից հետո հաջողվել է կայունացնել քաղաքական եւ տնտեսական իրավիճակը տարածաշրջանում: Էբելովի պաշտոնավարման ժամանակ՝ 1907 թ. սկզբին, առաջին անգամ օկրուգում անցկացվել են Ռուսաստանի II պետական դումայի ընտրություններ: Իրականացվել են մասսայական շինարարական աշխատանքներ, էականորեն իջել է սննդամթերքի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների գները: Էբելովի անմիջական նախաձեռնությամբ այդ տարիներին Չիտայում բացվել են նոր ուսումնարաններ (առեւտրային ուսումնարանը եւ այլն), վերացվել է ծիսական ուսումնարանների վարձը, բացվել է Սիբիրյան առեւտրային բանկը եւ այլն: Նման նպատակային միջոցառումների արդյունքում օկրուգի ուսանողները նույնպես դադարեցրել են իրենց ընդվզումները:

Էբելովի կառավարման տարիներին նշանակալից միջոցառում էր նաեւ օկրուգում «Տրանսսիբ» կոչվող ծրագրի իրականացումը: Այն երկաթուղու շարունակական շինարարություն էր, որն ըստ նախագծի անցնելու էր Չիտայով: Ամուրյան երկաթուղու արեւմտյան հատվածը՝ Կուենգիից Խաբարովսկ, լինելու էր օկրուգի համար կենսական նշանակության օբյեկտ: Երեւի ճակատագրի բերումով Միխայիլ Էբելովին վիճակված էր ղեկավարել ռուսական կայսրության այդ հեռավոր օկրուգում իրականացվող երկաթուղու շինարարական աշխատանքները եւ ոչ այն պատճառով, որ նա այդ գործի լավագույն մասնագետներից էր, այլ պարզապես զինվորական նահանգապետը անձնական պատասխանատվություն էր կրում իրեն վստահված տարածքներում տեղի ունեցածի համար: Նրա օրոք, 1906 թ. սկսվեցին երկաթուղու արեւմտյան հատվածի հետախուզական նախապատրաստական աշխատանքները, իսկ 1907 թ. մայիսին կառավարության որոշմամբ սկսվեց այդ հատվածի շինարարությունը, եւ 1908 թ. երկաթուղու շինարարության վարչությունը տեղափոխվեց Չիտա: Ամենօրյա

խնդիրներին Էբելովի համար ավելացավ նաեւ մեկ կարեւոր խնդիր՝ երկաթուղու շինարարության համար անհրաժեշտ աշխատուժի ապահովումը: Այդ գլխավոր խնդիրը նույնպես Էբելովը կատարեց օրինակելի եւ արդեն 1915 թ., առանց իր մասնակցության Ամուրյան երկաթուղին եւ նրա արեւմտյան հատվածը կառուցվեց եւ հաջորդ տարի հանձնվեց շահագործման:

1909 թ. մարտի 20-ին Էբելովը նշանակվել է 34-րդ Թուրքեստանյան դիվիզիայի ղեկավարի պաշտոնում, որտեղ ծառայել է մինչեւ 1911 թ. սեպտեմբերի 14-ը: Օրինակելի եւ անբասիր ծառայության համար 1910 թ. դեկտեմբերի 6-ին արժանացել է Ս. Աննայի 1-ին աստիճանի շքանշանի[11]:

Երբ ցարական Ռուսաստանի զինված ուժերում մեծ հեղինակություն վայելող գեներալ Վ. Ն. Նիկիտինը նշանակվեց Իրկուտսկի շրջանի զորքերի հրամանատար, Մ. Ի. Էբելովը նշանակվեց նրա օգնականի պաշտոնում եւ պաշտոնավարեց 1911 թ. սեպտեմբերի 14-ից 1913 թ. ապրիլի 21-ը: Գերազանց ծառայության համար 1913 թ. ապրիլի 14-ին նա ստացավ ինֆանտերիայի գեներալի բարձրագույն կոչում: Էբելովը գեներալ Նիկիտինի հետ ծառայել է նաեւ Օդեսայի շրջանում: Նա ստանձնել է այդ զորաշրջանի զորքերի հրամանատարի օգնականի պաշտոնը (օկրուգի զորքերի հրամանատարն էր նույն գեներալ Վ. Ն. Նիկիտինը): Այստեղ եւս Էբելովն իրեն դրսեւորել է միայն դրական կողմերով եւ 1913 թ. դեկտեմբերի 6-ին արժանացել է Ս. Վլադիմիրի 2-րդ աստիճանի շքանշանի[12]: Մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Էբելովն առանձնացել է նաեւ ռուսական ռազմագիտության բնագավառում կատարած ծանրակշիռ ներդրմամբ: Ժամանակի մամուլում հանդես գալով մի քանի մասնագիտական հրապարակումներով՝ հայազգի գեներալը տեսական գիտելիքներ է մատուցել ռազմական ոլորտի մի շարք մասնագետների: Իր հոդվածներում Էբելովը որոշ հրամանատարների հանգամանալից բացատրել է «անձնական տակտիկա» եւ «անձնական ստրատեգիա» եզրույթների բովանդակությունը, բազմաթիվ օրինակներով ցույց է տվել, որ հրամանատարի ցանկացած ինքնագործունեություն հանգեցնելու է անդառնալի հետեւանքների եւ պարտության: Այնուհետեւ Էբելովը հետեւողական կերպով բացատրել է թե ինչ է «ռազմական դոկտրին»-ը եւ այլն[13]: Ռուսական «Ռազվեդչիկ» հանդեսի 1910-1911 թթ. համարներում նրա հրապարակումներն ինչպես ռազմագիտության դասեր էին, այնպես էլ լավագույն փորձի լուսաբանում:

Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես Ռուսական կայսրության կառավարման համակարգում մտցվեցին նոր պաշտոններ, որոնցից էր նաեւ գեներալ-նահանգապետի պաշտոնը: 1914 թ. հուլիսի 19-ին հայազգի գեներալը նշանակվել է Օդեսայի գեներալ-նահանգապետ: Պատմական այդ ծանր ժամանակաշրջանում նա բարձր պատասխանատվությամբ է իրականացրել իր բոլոր պարտականությունները:

11 Տե՛ս *"Списокъ Генераламъ по старшинству", С.-Петербургъ,* 1912, էջ 194:

12 Տե՛ս *"Списокъ Генераламъ по старшинству", С.-Петербургъ,*1914, էջ 148. *"Списокъ Генеральнаго штаба", Петроградъ,* 1914, էջ 50:

13 Տե՛ս *"Разведчик", журнал военный и литературный,№* 1059, 1911, էջ 96:

1914 թ. նոյեմբերի 26-ին, երբ Թուրքիան նույնպես ներքաշվել էր Առաջին համաշխարհային պատերազմի մեջ եւ նոր բացված Կովկասյան ռազմաճակատում ընթանում էին ռազմական թեժ գործողություններ, գեներալ Էքելովը որպես Օդեսայի ռազմական շրջանի հրամանատար Գլխավոր շտաբի պետ գեներալ Ն. Ն. Յանուշկեւիչի առջեւ հանդես է եկել մի զեկուցումով՝ կապված իրեն վստահված զինվորական շրջանում գերմանացիների նկատմամբ սահմանափակիչ միջոցների կիրառման անհրաժեշտության հետ: Բանն այն էր, որ Օդեսայի ռազմական շրջանում վաղ ժամանակներից բնակություն էին հաստատել բազմաթիվ գերմանացիներ եւ տվյալ պահին առկա էր գերմանական մեծ համայնք: Գեներալ Յանուշկեւիչին ուղղված գրությունում Էքելովը նշել էր, որ իրեն վստահված նահանգում քաղաքացիական կարգավիճակով գերմանացիների առկայությունը մտահոգիչ է, իսկ թուրքերի հարձակումը Սեւ ծովում ստիպում է որպեսզի հատուկ միջոցառումներ իրականացվի այդ գերմանացիների նկատմամբ: Վերջիններս ավելի քան մեկ դար ապրում են այդ տարածքներում, անհրաժեշտության դեպքում միասնական են, ինչը կարող է պարարտ հող լինել հակառակորդի հարձակման համար: Այնուհետեւ Էքելովը հանգամանորեն շարադրել է իր մտահոգություններն ու գործողությունները՝ նշելով, որ ամբողջովին գերմանական են եւ նրանց բնակավայրերը, եւ լեզուն, եւ կենցաղը: Տներում հաճախ փակցված են Վիլհելմ II-ի դիմանկարները եւ այլն: Վտանգավոր հետեւանքներից խուսափելու համար Էքելովը մինչեւ Յանուշկեւիչին գրությամբ դիմելը, նոյեմբերի 25-ին՝ համապատասխան հրամանով, արգելել է ինչպես գերմանացիների հավաքները, այնպես եւ գերմաներեն լեզվով խոսելը: Յանուշկեւիչին ուղղված գրության մեջ Էքելովը հիմնավորել է այդ եւ ապագայում եւս մի քանի միջոցառումների անցկացման անհրաժեշտությունը, ուստի Յանուշկեւիչից խնդրել է հավանություն տալ միջոցառումների իր նախագծին[14]:

Էքելովը պատերազմի ընթացքում օրինակելի կերպով ամրապնդել է թիկունք-ռազմաճակատ կապը: Գերազանց ծառայության համար 1915 թ. մարտի 22-ին արժանացել է Սպիտակ Արծվի շքանշանի, իսկ 1916 թ. մայիսի 10-ին՝ Ս. Ալ. Նեւսկու շքանշանի: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Էքելովը մի շարք միջոցառումներ է ձեռնարկել իր կառավարման ներքո գտնվող տարածաշրջանում հեղափոխական եւ ազգայնական լարվածությունը լիցքաթափելու եւ ճակատի կայունությունը ապահովելու կապակցությամբ: Ժամանակը ցույց տվեց, որ այդ պահին Էքելովի իրականացրած միջոցառումները եղել են նպատակային եւ արդյունավետ: Այդ մասին հետագայում խոստովանեցին նաեւ խորհրդային պատմագրության որոշ ներկայացուցիչներ[15]:

---

14 Տե՛ս Ռուսաստանի Պետական Ռազմապատմական արխիվ, ֆ. 2005, ց. 1, գ. 28, թ. 5-8:

15 Տե՛ս **П. Л. Варгатюк, В. Ф. Солдатенко, П. М. Шморгун**, *В огне трех революций. Из истории борьбы большевиков Украины за осуществление ленинской стратегии и тактики в трех российских революциях,* Киев, 1986, էջ 292:

Ղրիմում բնակվող մուսուլմանների նկատմամբ Էբելովի առաջարկած միջոցառումներին ժամանակավոր կառավարությունն այդպես էլ լուրջ ուշադրություն չդարձրեց, ինչի հետեւանքով 1917 թ. վերջին Ղրիմը թաթարների կողմից գրավվեց[16]:

1917 թ. փվյալների համաձայն՝ Ղրիմի բնակչության 26,8 %-ը[17] մուսուլմաններ էին եւ իրենցից որոշակի ուժ էին ներկայացնում: Այդ ժամանակ նրանք կարողացան ձեւավորել ժամանակավոր մուսուլմանական գործադիր կոմիտե, որի ղեկավար կազմը հետագայում դարձավ նաեւ մուսուլմանական ազգային կուսակցության կորիզը[18]: Այս կառույցներն իրենց քաղաքական մտադրություններն իրագործելու նպատակով ջանքեր չխնայեցին՝ ստեղծելու թաթարական զինվորական միավորումներ[19]: Չնայած մուսուլմանական վերը նշված կազմակերպություններն այդ զորամիավորումների ստեղծման անհրաժեշտությունը հիմնավորում էին միասնական հայրենիքի պաշտպանության գաղափարով, սակայն բոլորի համար հասկանալի էր, որ մուսուլմանները բնավ ցանկություն չունեին Ռուսաստանի համար կռվելու: Ավելին, առաջին իսկ պատեհ առիթով նրանք առանց վարանելու անցնելու էին հակառակորդի կողմը: Դա ապացուցվեց 1917 թ. հուլիսի սկզբին, երբ Օդեսայի ռազմական շրջանի հրամանատար գեներալ Էբելովը Ղրիմի թաթարներին (10 սպա եւ 1300 զինվոր) հրամայեց միանալ Սիմֆերոպոլ քաղաքում գտնվող ռուսական 32-րդ պահեստային գնդին, որը հուլիսի 20-ին (օգոստոսի 2) մեկնելու էր Ռումինական ռազմաճակատ[20]: Ղրիմի թաթարական զինծառայողները չկատարեցին Էբելովի հրամանը եւ ցուցադրաբար ցրվեցին[21]: Ղրիմի մուսուլմանների քաղաքական կողմնորոշման փաստը մեկ անգամ եւս ապացուցվեց, երբ նրանց մի քանի առաջնորդներ ռուսական հակահետախուզության կողմից ձերբակալվեցին՝ Թուրքիայի օգտին լրտեսություն կատարելու մեղադրանքով: Սակայն, այդ ձերբակալվածները որոշ ժամանակ անց՝ ազգայնական հանրության ճնշման տակ եւ ժամանակավոր կառավարության անգործության հետեւանքով ազատ արձակվեցին[22]: Ավելին, Ժամանակավոր կառավարությունը տարածքներում լուծարեց մի շարք զինվորական-վարչական պաշտոններ, ինչով պայմանավորված կառավարման համակարգը տեղերում էլ ավելի թուլացավ:

Լուծարված պաշտոններից էին նաեւ գեներալ-նահանգապետների պաշտոնը:

16 Տե՛ս **А. Г. Зарубин, В. Г. Зарубин**, *Без победителей. Из истории гражданской войны в Крыму,* Симферополь, 1997, էջ 48. **П. Н. Надинский**, *Очерки по истории Крыма, ч. II, Крым в период Великой Октябрьской социалистической революции, иностранной интервенции и гражданской войны (1917–1920 гг.),* Симферополь, 1957, էջ 37:

17 Տե՛ս **П. Н. Надинский,** *Очерки по истории Крыма*, ч. II, էջ 12:

18 Տե՛ս **А. Г. Зарубин, В. Г. Зарубин**, *Без победителей*, էջ 25:

19 Տե՛ս **М. Н. Губогло, С. М. Червонная**, *Крымскотатарское национальное движение, т. II, документы, материалы, хроника,* Москва, 1992, էջ 175:

20 Տե՛ս "Вместе или порознь. Тюрки-мусульмане в российской армии в 1914–1918 годы", "Татарский мир", октябрь 2004, №15–16 (44–45), էջ 5:

21 Տե՛ս **А. Г. Зарубин, В. Г. Зарубин**, *Без победителей*, էջ 40-41:

22 Տե՛ս անդ, էջ 29:

Ռուսական կայսրության զինված ուժերի կայացման ու ամրապնդման գործում մեծ ներդրում կատարած մի շարք հայտնի զինվորականներ հայտնվեցին գործազուրկի կարգավիճակում: Նրանց մի մասը, չսպասելով հետագա զարգացումներին, խնդրագիր ներկայացրեց ընդհանրապես զինվորական ծառայությունից ազատվելու: Այդ ժամանակ առողջության պատճառով զորացրվելու խնդրագիր է ներկայացրել նաեւ Մ. Ի. Էբելովը եւ 1917 թ. օգոստոսի 9-ին հայազգի գեներալը զորացրվել եւ հաշվառվել է Օդեսայի զինվորական շրջանի շտաբի հաստիքային պահեստազորում: Ի տարբերություն շատ-շատերի՝ նույնիսկ 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Էբելովը շարունակել է մնալ քաղաքում՝ մինչեւ վերջ չհավատալով, որ Օդեսայում երբեւէ կարող է արյուն թափվել: Սակայն, բոլշեւիկների պատկերացումներն ու նպատակները տրամագծորեն տարբերվում էին հին կարգերի ժամանակ աշխատած եւ ծառայած մի շարք արժանավորների պատկերացումներից: Կարմիր ջոկատայինների՝ Օդեսայի գրավումից հետո Էբելովը շատերի նման ձերբակալվեց եւ 1919 թ. հուլիսի 12-ի գիշերը՝ լույս 13-ի առավոտյան, որպես հակահեղափոխական եւ որպես ամուր համոզմունքներով միապետական, գնդակահարվեց[23]: Հայազգի գեներալ Միխայիլ Իսայի Էբելովը հուղարկավորված է Օդեսայի 2-րդ քրիստոնեական գերեզմանատանը: Էբելովը ամուսնացած էր եւ ուներ երկու դուստր:

23 Տե՛ս **К. А. Залесский**, *Кто был кто в первой мировой войне,биографический энциклопедический словарь,*Москва, 2003, էջ 693: